գրելիս, 1566 թուականին գրում է, որ այնտեղ Սիմոն երէցը նրան ասել էր, թէ «երբ, մի քանի տարի առաջ, Հռոմ էր գնացել իր եպիսկոպոսի հետ, որը հիմա Լուովում է թաղուած, վերջինս այնտեղ Ս. Պետրոս էր մատուցել հայկական ծէսով»[36]։ Հերբեստի այս վկայութիւնը յիշատակում է նաեւ Պետրովիչը՝ մի ուրիշ կապակցութեամբ եւ իրաւամբ դնում, որ ակնարկուած եպիսկոպոսը հենց Սալմասեցին է[37], բայց հաշուի չի առնում, որ «մի քանի տարի» ասելով կարելի է հասկանալ 2–3 տարի, կամ՝ 3–4 տարի, կամ էլ շատ-շատ՝ 5–6 տարի, բայց ոչ 16 տարի, ինչպէս լռելեայն համարում է ինքը՝ Պետրովիչը, որպէսզի կարողանայ տանել-կապել 1550 թուականի հետ։ Եւ սրանով մենք ժամանակակից Հերբեստի վկայութեամբ տեղեկութիւն ենք ստանում այն մասին, որ Սալմասեցին մահացել է 1560-ական թուականների սկզբի տարիներին եւ թաղուել է Լուովում։ Բացի այդ՝ Հերբեստի «մի քանի տարի առաջ» խօսքը միաժամանակ վկայութիւնն է այն ուղեւորութեան, որ Սալմասեցին պիտի կատարած լինէր Լուովից դէպի Հռոմ, որպէսզի պապից յանձնարարագիր ստանար՝ Ֆերդինանդ կայսրին ներկայանալու համար։

Այժմ վերյիշենք, որ, ժամանակին, որոշ աղբիւրներում Սալմասեցու մահուան որպէս տարեթիւ ցոյց տրուած 1551 եւ 1552 թուականների մասին խօսելիս, գրել էինք. «Մի շարք փաստեր մեզ ասում են, թէ յիշեալ թուականներին Ստեփանոս Սալմասեցին չէր մահացել Լուովում եւ չէր թաղուել այնտեղ»[38]։ Այդ հին հաւատամանն են վերաբերում վերեւում մեր ներկայացրած փաստերն ու փաստարկները։

ԼՈՒՈՎԻ ԴԱՄԲԱՆԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Պետրովիչն իր հայերէն գրքոյկում Սալմասեցու անունը կրող դամբանական արձանագրութիւնն առաջ է բերում մի քանի հրատարակուած տարբերակներով։ Սակայն զարմանալի է, որ նա անտեսում է ճշգրտութիւնները, այնինչ գրանք կարեւոր են։ Տեսնենք նրա նշած աղբիւրներից առաջին երկուսը։

Նախ բերենք հնագոյնը՝ Ս. Ստարովոլսկու տուածը, ուղղակի իր աղբիւրից եւ ոչ թէ Պետրովիչից.

HOC SEPULCHRUM EST RŃDI PATRIS STEPHANI, PATRIARCHAE MAIORIS ARMENIAE, QUI ROMAE FUIT ET ADUENIENS LEOP. ANIMAM SUAM DEO TRADIDIT ANNO DOMINI 1551 DIE 14 IANUARIJ, IULIO SECUNDO PONTIFICI MAX. REDDIDIT OBEDIENTIAM[39].

Պետրովիչն այլափոխում է այս արձանագրութիւնը՝ տառերով գրուած Iulio Secundo (Յուլիոս Երկրորդին) անունը սրբագրելով եւ դարձնելով հռոմէական թուանշաններով գրուած Julio III (Յուլիոս Երրորդին)[40]։

Իսկ ինչո՞ւ համար է կատարուել այդ փոփոխութիւնը։ Կարելի՞ է մտածել, թէ դա արուած կը լինի պարզապէս արձանագրութեան «սխալն» ուղղելու համար, այն հաշուով, որ 1551 թուականին պապական գահի վրայ գտնուողը ոչ թէ Յուլիոս Երկրորդն (1503–1513 թթ.) էր, այլ Յուլիոս Երրորդը (1550–1555 թթ.)։

Մենք դժուարանում ենք այդպիսի թեթեւ մօտեցում վերագրել փորձառու պատմաբան Պետրովիչին, բայց չենք դժուարանում նկատել, որ նա ակնյայտօրէն

---

[36] B. Herbest, «Wypisanie drogi», *MLUR*, vol. 5, str. 4-8.

[37] PChA p. 148.

[38] Էջմիածին, 1956, № 11-12, էջ 76։

[39] S. Starovolscius (Starowolski), «Monumenta Sarmatorum, viam universæ carnis ingressorum», Cracoviæ, 1655, p. 300.

[40] Տես ՊՍՍ էջ 49-50։